ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «27» հուլիսի 2020թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 26-Ա[1]

ՄԱՐԻՆԵ ՌՈՒԴՈԼՖԻ ԱԶԻԶՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՖԻՆԱՆՍԻՍՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր ֆինանսիստի (ծածկագիր՝ 18-1-28.1-Մ3-3) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունն ու Մարինե Ազիզյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Մարինե Ռուդոլֆի Ազիզյանին 2020 թվականի հուլիսի 28-ից նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի ավագ ֆինանսիստի (ծածկագիր՝ 18-1-28.1-Մ3-3) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Մ. Ազիզյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1.1-րդ մասի պահանջներին համապատասխան:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ
(պարտականությունները կատարող)